



**ԱՆԿԱՆՈՆ ՄԻԳՐԱՑԻՈՆ ՀԱՐՑԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ
ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ 2013**

Հարգելի բարեկամներ,

Վերջին շրջանում միգրացիայի ոլորտում Հայաստան-ԵՄ հարաբերություններում համագործակցության ընդարձակ օրակարգ է ձևավորվել, ինչն ընդգրկում է համատեղ միջոցառումների իրականացումը ինչպես բազմակողմ, այնպես էլ երկկողմ հարթակներում: Թվարկեմ դրանցից կարևորագույնները:

2011թ. հոկտեմբերին Եվրոհանձնաժողովի և ԵՄ անդամ 10 երկրների հետ Հայաստանը ստորագրեց «Գործընկերություն շարժունակության շուրջ» քաղաքական հռչակագիրը, իսկ անցած տարի՝ «Վիզաների տրամադրման գործընթացի դյուրացման մասին» համաձայնագիրը: Ավարտված են բանակցությունները ԵՄ-ի հետ կնքվելիք մի այլ՝ «Ռեադմիսիայի մասին» համաձայնագրի շուրջը և այն առաջիկա օրերին նույնպես կստորագրվի: Բացի միգրացիայի ոլորտում համագործակցության իրավա-պայմանագրային հիմքերի ստեղծումից, հսկայական առաջընթաց է գրանցվել կոնկրետ ուղղվածության առանձին ծրագրերի իրականացման հարցերում: ԵՄ-ի կողմից ներկայումս Հայաստանում իրականացվում են միգրացիոն թեմատիկայով 7 ծրագրեր՝ շուրջ 9.0 մլն. եվրո ընդհանուր արժողությամբ: Իսկ երկկողմ համագործակցության շրջանակներում ԵՄ անդամ 4 երկրների հետ ևս իրականացվում են նմանատիպ ծրագրեր:

Այս ամենի նպատակն է դյուրացնել տեղաշարժերը և շփումները մարդկանց միջև, առավելագույնի հասցնել միգրացիայի դրական անդրադարձերը և ընդհակառակը՝ նվազեցնել այդ երևույթի բացասական հետևանքները: Ձևակերպված նպատակին հասնելու ուղիներից է տեղեկատվության տարածումը ԵՄ երկրներ մուտք գործելու, բնակվելու, աշխատանքային գործունեություն ծավալելու կարգի և պայմանների մասին:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մեր բնակչության զգալի մասը չունի բավարար տեղեկություններ միգրացիոն հարցերի վերաբերյալ, նրանք տեղյակ չեն, թե ինչ է իրականում սպասվում այսպես կոչված «հանձնվողներին», կամ, արդյոք հնարավոր է անվճար բուժում ստանալ եվրոպական երկրներում: Բազմաթիվ են դեպքերը, երբ կասկածելի տեղեկությունների հիման վրա մարդիկ հավաքում են իրենց ճամպրուկները, զգալի ծախսեր կատարում ու ճանապարհ ընկնում, բայց արդյունքում հայտնվում են անկանոն միգրանտի անցանկալի կարգավիճակում:

Միգրացիոն գործընթացների վերաբերյալ բնակչության շրջանում հավաստի տեղեկատվության տարածումը խթանելու նպատակով էլ կազմակերպվել է լրագրողական այս մրցանակաբաշխությունը: Ընդ որում որոշում ընդունվեց, որ հրապարակված նյութերին ներկայացվող պահանջների, դրանց ընտրման չափանիշների, ժյուրիի ձևավորման և մրցանակաբաշխության հետ կապված մնացած մեծ ու փոքր հարցերի լուծմամբ պետք է զբաղվի ոչ թե պետական կառույցը, այլ լրատվության ոլորտում փորձառություն ունեցող ՈԿԿ-ը՝ տվյալ դեպքում «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» կազմակերպությունը: Ի դեպ, այս կենտրոնը անցած տարի հաջողությամբ կազմակերպեց Թրաֆիքինգի խորհրդի հայտարարված մրցանակաբաշխությունը: Ուզում եմ տեղեկացնել, որ այս տարի նույնպես Թրաֆիքինգի խորհուրդը լրագրողների շրջանում հայտարարել է մրցանակաբաշխություն և կոչ էմ ուղղում ձեզ՝ լրագրողներին, մասնակցելու այդ մրցույթին:

Եվ վերջապես, այս մրցանակաբաշխությունը հնարավոր եղավ կազմակերպել Բելգիայի իշխանությունների աջակցության շնորհիվ: Նրանց հետ միգրացիայի ոլորտում հաստատվել է արդյունավետ համագործակցություն, որը գնալով ընդլայնվում և խորանում է: Ուզում եմ ողջունել Բելգիայի Թագավորության ներքին գործերի դաշնային ծառայության իմմիգրացիայի գրասենյակի ներկայացուցիչ Կաթի Վերգելենին, ով հատուկ այս միջոցառմանը մասնակցելու համար ժամանել է Երևան:

Ավարտելով խոսքս՝ շնորհակալություն եմ հայտնում մրցույթին մասնակցած բոլոր լրագրողներին և առաջ ընկնելով՝ շնորհավորում հաղթողներին: